

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 127/10

Քաղ. Երևան

30 հունիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. հունիսի 30-ի նիստում (արձանագրություն N81/3) քննարկեց «Գրանդ Տոբակո» հայկանադական ՀԶ ՍՊԸ-ի 2010թ. հունիսի 30-ի «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերությանը պատկանող «MARCOPOLO» (N 7153) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ դիմումը:

Բողոքում ներկայացված է, որ 2002թ. դեկտեմբերի 26-ին ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից ԱԾՄԴ 34-րդ դասի ապրանքների համար գրանցված «MARCOPOLO» (N 7153) համակցված ապրանքային նշանը սեփականատիրոջ կողմից (Ն. Վ. Սումաթրա Թբեքոու Թրեյդինգ Քամփնի) երբևէ չի օգտագործվել:

Որպես հիմնավորում վերոնշյալի «Գրանդ Տոբակո» հայկանադական ՀԶ ՍՊԸ-ի կողմից Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության մի շարք մարզերում կատարված մարքեթինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գրանցման պահից սկսած ավելի քան 5 տարի վերը նշված ապրանքային նշանով մակնշված արտադրանք երբևէ հայկական շուկայում սեփականատիրոջ կողմից տնտեսական շրջանառության մեջ չի դրվել և բնավ ողջամիտ ծավալով իրացում չի ապահովել:

Դիմողը առաջնորդվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, խնդրում է «MARCOPOLO» ապրանքային նշանի (սեփականատեր՝ Ն.Վ. Սումաթրա Թբեքոու Թրեյդինգ Քամփնի, 10) գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել գրանցված ԱԾՄԴ 34-րդ դասի բոլոր ապրանքների նկատմամբ, քանի որ հիշյալ նշանը սույն դիմումին նախորդող 5

(հինգ) տարվա ընթացքում չի օգտագործվել ՀՀ տարածքում ԱՕՄԴ 34-րդ դասի ապրանքներից և ոչ մեկի համար:

Ի պատասխան ՀՀ մտավոր սեփականության գործակալության 23.04.2010թ. ծանուցագրի, «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանը նշել է, որ «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերությունը չի օգտագործել «MARCOPOLO» ապրանքային նշանը Հայաստանում, սակայն, նա հավաստիացնում է, որ ընկերությունը մտադիր է ներմուծել և վաճառել «MARCOPOLO» ապրանքային նշանով մակնշված ապրանքը Հայաստանում և ջանքեր գործադրել նշանը օգտագործելու նպատակով:

Իբրև ապացույց «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերությունը ներկայացրել է Հայտարարագիր, որով նա հայտարարում է, որ «MARCOPOLO» ապրանքային նշանով մակնշված ապրանքները գովազդվել են բազմաթիվ հանրաճանաչ ամսագրերում, որոնք իրացվել են նաև Հայաստանում:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացանելիս նշվեց, որ «Գրանդ Տոբակո» հայ-կանադական ՀՀ ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է դիմում, համաձայն որի նա խնդրում է «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերությանը պատկանող «MARCOPOLO» (N 7153) համակցված ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել:

Դիմումի համար իրավական հիմք են ծառայել «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասը, համաձայն որի ապրանքային նշանի գործողությունը կարող է վաղաժամկետ դադարեցվել բոլոր ապրանքների համար կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքային նշանի գրանցման թվականից հաշված հինգ տարվա ընթացքում կամ դիմումն ավելի վաղ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող հինգ տարվա ընթացքում այն ընդհանրապես չի օգտագործվել կամ օգտագործվել է ոչ ողջամիտ ծավալներով:

Ընդհանուր քննարկման արդյունքում, Կոլեգիան որոշեց դիմումը բավարարել, քանի որ «N. V. Sumatra Tobacco Trading Company» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի ներկայացրած փաստարկները չէին վկայում, որ ընկերության կողմից «MARCOPOLO» (N 7153) համակցված ապրանքային նշանը օրենքով նախատեսված ժամանակահատվածում օգտագործվել է:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման» կարգի 80-րդ կետի 1-ին ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել «Գրանդ Տոբակո» հայ-կանադական ՀԶ ՍՊԸ-ի դիմումը եւ «MARCOPOLO» (N 7153) համակցված ապրանքային նշանի գրանցումը ԱՕՄԴ 34-րդ դասի ապրանքների համար վաղաժակեւ դադարացնել:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան